Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> <li>մասնագիտական գիտելիք և իմացություն ժամանակակից հոգեախտորոշման առարկայի և նրա հնարավորությունների մասին:</li> </ul> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,</li> </ul> <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>տիրապետեն հոգեբանության և հոգեախտորոշման հետազոտության մեթոդներին, բացատրեն</li> </ul>			

	<p>հոգեախտորոշման նպատակները և կարողանան գիտական հարցերի և որոշ հոգեբանական խնդիրների վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:</p>
<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p>“Հոգեախտորոշում և հոգեբանական պրակտիկում” դասընթացը տրամադրում է գիտելիքներ կյանքի տարբեր ոլորտներում հոգեախտորոշման և պրակտիկայի յուրահատկությունների վերաբերյալ, ծանոթացնում է հոգեախտորոշման կազմակերպման և իրականացման առանձնահատկություններին, տեխնիկաներին, մեթոդներին ու մեթոդիկաներին, չափող միջոցներին, որպեսզի երբ անձի օբյեկտիվ հոգեբանական գնահատում և ախտորոշում անցկացնեն, հիմնավորումները համոզիչ ու հավաստի լինեն:</p> <p>Առարկայի իմացությունը հնարավորություն կտա ապագա մասնագետներին ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ոլորտում, բացահայտել հիմնախնդիրները և արդյունավետ կազմակերպել իրենց գործունեությունն ու առաքելությունը:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հոգեախտորոշման առարկան, առաջացման նախադրյալները և խնդիրները:</li> <li>2. Հոգեախտորոշիչ աշխատանքի իրականացման փուլերը:</li> <li>3. Հոգեախտորոշման մեթոդները և նրանց ներկայացվող պահանջները:</li> <li>4. Հոգեախտորոշիչ տեխնոլոգիայի սկիզբը:</li> <li>5. Հոգեախտորոշման համար անհրաժեշտ գրանցման փաստաթղթեր: Սովորողի հոգեբանական գնահատման քարտ:</li> <li>6. Տառապանքի ախտորոշում և հաղթահարման գործընթացները:</li> <li>7. Տրամադրության խանգարումների, դեպրեսիայի ախտորոշում:</li> <li>8. Կպչուն-սևեռուն խանգարումների ախտորոշումը դեռահասների և պատանիների մոտ:</li> <li>9. Անվստահ ծնողի սինդրոմի ախտորոշում:</li> </ol>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p>Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների</li> </ul>



	<p>միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,</li> <li>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:</li> </ul>
<p><b>Գրականություն</b></p>	<p>Պարտադիր-</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ամիրյան Հ. Կոնսուլտատիվ հոգեբանության և հոգեթերապիայի հիմունքներ, Երևան, 2002, 204 էջ</li> <li>2. Գասպարյան Խ., Եղիյան Մ., Հոգեկան առողջությունը և մարդու իրավունքները, Երևան, 2010, 96 էջ</li> <li>3. Կլիմով Ե. Պրոֆեսիոնալ կոնսուլտացիայի հոգեբանամանկավարժական պրոբլեմները Երևան. 1985, 86 էջ</li> <li>4. Կրթական բարեփոխումներ. Հարցեր և պատասխաններ 2005.</li> <li>5. Սեդրակյան Ս, Ղազարոսյան Ա., Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում, Երևան, 2016, 184 էջ</li> <li>6. Ղազարոսյան Ա., Հոգեբանական աջակցություն ուսուցիչներին, Վանաձոր, 2019, 208 էջ</li> </ol> <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Гусакова М.П., Психологическое консультирование: учебное пособие. – М.: Эксмо, 2010.</li> <li>2. Линде Н.Д., Психологическое консультирование. – М., 2009</li> <li>3. Нельсон-Джоунс Р., Теория и практика</li> </ol>

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՄՀ/բ – 103 Հոգեբանամանկավարժական պրակտիկում			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	28	Դասախոսություն	6
			Մեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	22
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Քննություն, ընթացիկ քննություն, <u>ստուգաք</u>			
Դասընթացի նպատակը	Ներկայացնել հոգեկան գործընթացների փորձարարական հետազոտման մեթոդները և մեթոդիկաները Ձևավորելու շաղրության և պերցեպտիվ գործընթացների փորձարարական հետազոտման կարողությունների մասին			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հոգեկան պերցեպտիվ գործընթացների հետազոտման մեթոդաբանությունը</li> <li>• Հոգեկան պերցեպտիվ գործընթացների փորձարարական հետազոտման մեթոդներն ու մեթոդիկաները</li> <li>• Հոգեբանական հետազոտությունների անցկացման բարոյագիտական պահանջները</li> </ul> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• հոգեբանական բնութագրերի կազմման սկզբունքներին</li> <li>• հոգեբանական հետազոտությունների</li> </ul>			

	<p>արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ամփոփումների ձևակերպման հմտություններին</p> <ul style="list-style-type: none"> <li>• հոգեբանական հետազոտության տեսական, մեթոդական, տեխնիկական կողմերին</li> </ul> <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Փորձարարական հետազոտության կազմակերպման և պլանավորման կարողություններ, արդյունքների մշակման և վերլուծության, ամփոփումների ձևակերպման կարողություններ,</li> <li>• Հոգեբանական հետազոտության հիմնական էմպիրիկ մեթոդների կիրառման կարողություններ,</li> <li>• Էմպիրիկ հետազոտության մեթոդական վերլուծության կարողություններ,</li> <li>• Հիմնական մեթոդիկաների և տվյալների հավաքելու տեխնիկայի օգտագործման կարողություններ, որոնք պահանջվում են հետազոտական և գործնական աշխատանքում:</li> </ul>
<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p>Թեմա1. Ներածություն Հոգեկան գործընթացների պրակտիկումի առարկան, ինդիքները, կապը այլ հոգեբանական գիտաճյուղերի հետ: Պրակտիկումը որպես հոգեբանի ընդհանուր մասնագիտական պատրաստման կարևոր բաղադրիչ:</p> <p>Թեմա2. Զգայությունների հետազոտումը հոգեֆիզիկական մեթոդներով: Տեսողական զգայության բացարձակ շեմի որոշումը: Ծանրության զգայության տարբերակման շեմի հետազոտումը: Լսողական զգայության բացարձակ շեմերի որոշումը: Կինեսթետիկական զգայության հետազոտումը:</p> <p>Թեմա3. Ըմբռնումների հետազոտման մեթոդիկաները: Ժամանակի ըմբռնման հետազոտություն: Ըմբռնման ծավալի հետազոտություն: Դիտողականության հետազոտություն: Առաջատար սենսորային համակարգի որոշման մեթոդիկա: Ըմբռնումների անհատական առանձնահատկությունների հետազոտման մեթոդիկա:</p> <p>Թեմա4. Ուշադրությա նհետազոտման մեթոդիկաներ: Ուշադրության կենտրոնացվածության և կայունության դինամիկայի հետազոտություն: Ուշադրության տատանումների հետազոտում: Ուշադրության բաշխվածության հետազոտություն: Ուշադրության ծավալի հետազոտություն: Կամաձին ուշադրության առանձնահատկությունների հետազոտում:</p>

<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p>Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,</li> <li>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:</li> </ul>
<p><b>Գրականություն</b></p>	<p>Պարտադիր</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կ. Վ. Ոսկանյան «Հոգեբանության լաբորատոր աշխատանքներ», Ե. 2001:</li> <li>2. Դ. Հայրապետյան «Իմացական գործընթացների պրակտիկում» ,Ե.2009</li> <li>3. Մ.Մազմանյան «Հոգեբանության լաբորատոր աշխատանքներ» (Պերցեպտիվ գործընթացներ)!, Վ., 2017</li> <li>4. Վ. Միրզոյան «Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանություն և մեթոդներ», Վ., 2015</li> </ol> <p>Լրացուցիչ</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Психологические исследования. Практикум по общей психологии для студентов педагогических вузов // Т.И. Пашукова , А.И. Допира, Г.В. Дьяконов. Учеб. пособие . М, 1996.</li> </ol>

	<p>2. Немов Р.С. Психология. Кн.3. М., Владос. 1999г.</p> <p>3. Психологическая диагностика. Учебное пособие. Под ред. К.М. Гуревича, Е.М. Борисовой. М., Изд-во УРАО. 2000г.</p> <p>4. Анастаси А., Урбина С. Психологическое тестирование. Санкт-Петербург. Питер. 2001г.</p> <p>5. Бурлачук Л.Ф. Психодиагностика. Учебник для вузов. Питер. 2003г</p> <p>6. Носс И.Н. Введение в технологию психодиагностики. М., Изд-во инст-та психотерапии. 2003г.</p> <p>7. Бодалев А.А., Столин В.В. Общая психодиагностика. – СПб.: Изд-во «Речь», 2000.</p> <p>8. Бурлачук Л.Ф. Введение в проективную психологию. – Киев: Ника-Центр, 1997.</p> <p>9. Бурлачук Л.Ф. Психодиагностика. – СПб.: Питер, 2002.</p> <p>10. Соколова Е.Т. Проективные методы исследования личности. – М.: Изд-во Моск. ун-та, 1980.</p>
--	---

<b>Դասընթացի թվանիշը, անվանումը</b>	<b>ՄՀ/բ - 103 Հոգեբանամանկավարժական պրակտիկում</b>			
<b>Դասընթացին հատկացվող կրեդիտը</b>	2 կրեդիտ			
<b>Ուսումնառության տարի / կիսամյակ</b>	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
<b>Ժամերի բաշխումը</b>	Լսարանային	28	Դասախոսություն	6
			Մեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	22
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
<b>Ստուգման ձևը</b>	Քննություն, ընթացիկ քննություն, <b><u>ստուգաբար</u></b>			
<b>Դասընթացի նպատակը</b>	Ներկայացնել հոգեկան գործընթացների փորձարարական հետազոտման մեթոդները և մեթոդիկաները Ձևավորել կոգնիտիվ գործընթացների փորձարարական հետազոտման կարողություններ			
<b>Դասընթացի</b>	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ			

<p><b>վերջնարդյունքները</b></p>	<p>վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հոգեկան կոգնիտիվ գործընթացների հետազոտման մեթոդաբանությունը</li> <li>• Հոգեկան կոգնիտիվ գործընթացների փորձարարական հետազոտման մեթոդներն ու մեթոդիկաները</li> <li>• Հոգեբանական հետազոտությունների անցկացման բարոյագիտական պահանջները</li> </ul> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• հոգեբանական բնութագրերի կազմման սկզբունքներին</li> <li>• հոգեբանական հետազոտությունների արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ամփոփումների ձևակերպման հմտություններին</li> <li>• հոգեբանական հետազոտության տեսական, մեթոդական, տեխնիկական կողմերին</li> </ul> <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Փորձարարական հետազոտության կազմակերպման և պլանավորման կարողություններ, արդյունքների մշակման և վերլուծության, ամփոփումների ձևակերպման կարողություններ,</li> <li>• Հոգեբանական հետազոտության հիմնական էմպիրիկ մեթոդների կիրառման կարողություններ,</li> <li>• էմպիրիկ հետազոտության մեթոդական վերլուծության կարողություններ,</li> <li>• Հիմնական մեթոդիկաների և տվյալների հավաքելու տեխնիկայի օգտագործման կարողություններ, որոնք պահանջվում են հետազոտական և գործնական աշխատանքում:</li> </ul>
<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p>Թեմա 1. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ :</p> <p>Հիշողության սահմանումը, տեսակները, պրոցեսները, դերը մարդու կենսագործունեության մեջ: Պիկտոգրամայի մեթոդը հիշողության ուսումնասիրության մեջ: Կարճատև հիշողության ծավալի հետազոտություն: Անմիջական և միջնորդավորված հիշողության հետազոտություն: Հիշողության գերակշռող տեսակի</p>

	<p>ուսումնասիրություն: Հետազոտությունների նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Թեմա 2. Մտածողության էքսպերիմենտալ հոտազոտման մեթոդները ժամանակակից հոգեբանության մեջ: Մտածողության ընդհանուր բնութագիրը, տեսակները, անհատական առանձնահատկությունները: Մտածողության ակտիվության հետազոտություն: Մտածողության ռիզիկոյության հետազոտություն/Լաչինսի մեթոդիկա/: Ակնառու-գործուն մտածողության հետազոտություն: Հետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Թեմա 3. Խոսքի էքսպերիմենտալ հետազոտման մեթոդները ժամանակակից հոգեբանության մեջ: Գրավոր խոսքի հոգեբանական վերլուծությունը; Արտասանական խոչընդոտների պարագայում խոսքի հասկացման ուսումնասիրում: Խոսքի տեմպառիթմային առանձնահատկությունների ուսումնասիրում: Խոսքի գնահատումը սեմանտիկ դիֆերենցիալի մեթոդով: Ազատ զուգորդությունների մեթոդ: Թեմա 4. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ : Պատկերացումների հստակության գնահատում: Ստեղծագործական երևակայության ուսումնասիրում: Երևակայության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում: Ֆիզուրների լրանկարում/Դյաչենկոյի մեթոդիկա/: Տարածական պատկերացումների ուսումնասիրությունը մտածական գործողությունների քրոնոմետրիայի մեթոդով:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p>Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում</li> </ul>

	<p>առավելագույնը գումարային 20 միավոր,</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:</li> </ul>
<p><b>Գրականություն</b></p>	<p><b>Պարտադիր</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մ. Արզումանյան, Մ. Մկրտչյան, Վ. Սարգսյան «Կիրառական հոգեբանության պրակտիկում», Ե. 2002:</li> <li>2. Կ. Վ. Ոսկանյան «Հոգեբանության լաբորատոր աշխատանքներ», Ե. 2001:</li> <li>3. Դ.Հայրապետյան«Իմացական գործընթացների պրակտիկում»,Ե.2009</li> <li>4. «Практикум по общей, экспериментальной и прикладной психологии : Учеб. пособие // Под общей ред. А. А. Крылова, С. А. Маничева. СПб. : Питер, 2000.</li> <li>5. Психологические исследования. Практикум по общей психологии для студентов педагогических вузов // Т.И. Пашукова , А.И. Допира, Г.В. Дьяконов. Учеб. пособие . М, 1996.</li> </ol> <p><b>Լրացուցիչ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Немов Р.С. Психология. Кн.3. М., Владос. 1999г.</li> <li>2. Психологическая диагностика. Учебное пособие. Под ред. К.М. Гуревича, Е.М. Борисовой. М., Изд-во УРАО. 2000г.</li> <li>3. Анастаси А., Урбина С. Психологическое тестирование. Санкт-Петербург. Питер. 2001г.</li> <li>4. Бурлачук Л.Ф. Психодиагностика. Учебник для вузов. Питер. 2003г</li> <li>5. Носс И.Н. Введение в технологию психодиагностики. М., Изд-во инст-та психотерапии. 2003г.</li> <li>6. Бодалев А.А., Столин В.В. Общая психодиагностика.</li> </ol>



	<p>– СПб.: Изд-во «Речь», 2000.</p> <p>7. Бурлачук Л.Ф. Введение в проективную психологию. – Киев: Ника-Центр, 1997.</p> <p>8. Бурлачук Л.Ф. Психодиагностика. – СПб.: Питер, 2002.</p> <p>9. Соколова Е.Т. Проективные методы исследования личности. – М.: Изд-во Моск. ун-та, 1980.</p>
--	---

<b>Դասընթացի թվանիշը, անվանումը</b>	<b>ՄՀ/բ - 057 Տարիքային և մանկավարժական հոգեբանություն</b>										
<b>Դասընթացին հատկացվող կրեդիտը</b>	4 կրեդիտ										
<b>Ուսումնառության տարի / կիսամյակ</b>	3-րդ տարի, 1-ին կիսամյակ										
<b>Ժամերի բաշխումը</b>	Լսարանային	56	<table border="1"> <tr> <td>Դասախոսություն</td> <td>24</td> </tr> <tr> <td>Սեմինար</td> <td></td> </tr> <tr> <td>Լաբորատոր աշխատանք</td> <td></td> </tr> <tr> <td>Գործնական աշխատանք</td> <td>32</td> </tr> </table>	Դասախոսություն	24	Սեմինար		Լաբորատոր աշխատանք		Գործնական աշխատանք	32
Դասախոսություն	24										
Սեմինար											
Լաբորատոր աշխատանք											
Գործնական աշխատանք	32										
	Ինքնուրույն	64									
	Ընդամենը	120									
<b>Ստուգման ձևը</b>	<b><u>Քննություն</u></b> , ընթացիկ քննություն, ստուգաբար										
<b>Դասընթացի նպատակը</b>	<p>1. Ուսանողներին զինել մարդու օնոգենեզի զարգացման մասին գիտելիքներով:</p> <p>2. Խորացնել ուսանողների ընդհանուր տեսական, պրակտիկ, հոգեբանական և մեթոդական գիտելիքները:</p> <p>3. Ուսանողներին զադափար տալ մարդու զարգացման ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեբանական օրինաչափությունների մասին:</p> <p>4. Տարիքային և մանկավարժական հոգեբանության բնագավառում ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:</p> <p>5. Նախապատրաստել հոգեբանական գիտությունների ցիկլի առարկաների(սոցիալական հոգեբանություն, ընտանիքի հոգեբանություն, հոգեբանամանկավարժական խորհրդատվություն և այլն) հետագա ուսումնասիրություններին:</p>										

<p><b>Դասընթացի վերջնարդյունքները</b></p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• հոգեկանի զարգացման օրինաչափություններն ու նորագոյացությունները,</li> <li>• յուրաքանչյուր տարիքային փուլի հոգեբանական բնութագիրը,</li> <li>• ուսուցման և դաստիարակության կազմակերպման և իրականացման օպտիմալ եղանակները</li> <li>• սոցիալական միջավայրի դերն ու ազդեցությունը անձի ձևավորման վրա:</li> </ul> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ տարիքային և մանկավարժական հոգեբանության առարկային</li> <li>✓ տարիքային հոգեբանության ժամանակակից մեթոդներին,</li> <li>✓ հոգեբանամանկավարժական հետազոտության առանձնահատկություններին,</li> <li>✓ երեխաների հետ աշխատանքի առանձնահատկություններին</li> <li>•</li> </ul> <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ բացահայտել հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները և ուսումնասիրել դրանց դրսևորման պատճառները,</li> <li>✓ անցկացնել հոգեբանամանկավարժական հետազոտություն,</li> <li>✓ խորհրդատվական աշխատանք իրականացնել չառաջադիմող և «դժվար» և «&lt;ոխսկի խմբի&gt;&gt; աշակերտների հետ,</li> <li>✓ կատարել անձի հոգեբանական վերլուծություն, □ կազմել աշակերտի և դասարանային կոլեկտիվի հոգեբանական բնութագիրը:</li> </ul>
<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p>Դասընթացի ընդհանուր նկարագիրը</p> <p>Դասընթացում դիտարկվում են մարդու հոգեկանի զարգացման մեխանիզմները, օրինաչափությունները, հոգեկան զարգացման տարիքային դինամիկան, մանկավարժական գործունեությունը, ուսուցման և դաստիարակության հոգեբանությունը: Դասընթացի</p>

նպատակն է ուսանողներին զինել գիտելիքներով օնտոգենեզում հոգեկանի զարգացման մեխանիզմների և օրինաչափությունների, մարդու անձի հոգեկան զարգացման առանձնահատկությունների և տարիքային հոգեբանական առանձնահատկությունների մասին: Իսկ մանկավարժական հոգեբանությունը և հոգեբանությունը նպաստում են աշակերտների անձնային աճին, ինքնաճանաչմանը: Դասընթացը ընդլայնում է ուսանողների ընդհանուր տեսական, կիրառական և մեթոդական գիտելիքները, գաղափար է տալիս մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունների և դինամիկայի մասին: Տարիքային հոգեբանության բնագավառում ձեռք բերած գիտելիքները և կարողությունները ուսանողը պատրաստ է կիրառել պրակտիկ գործունեության մեջ:

Թեմա 1. Տարիքային և մանկավարժական հոգեբանության առարկան, ինդիքները, մեթոդները:

Տարիքային և մանկավարժական հոգեբանության՝ որպես գիտության սահմանումը: Ուսումնասիրման օբյեկտը, տարիքային հոգեբանության հիմնական բաժինները. նորածնություն, մանկիկություն, վաղ մանկություն, նախադպրոցական, կրտսեր դպրոցական տարիք, դեռահասություն, վաղ պատանեկություն: Իսկ մանկավարժական հոգեբանության բաժիններից՝ ուսուցման, ուսուցչի և դաստիարակության հոգեբանություն: Մանկավարժական հոգեբանությունն ուսումնասիրում է հոգեկանի զարգացումը ուսուցման և դաստիարակության պրոցեսում: Տարիքային հոգեբանության կապը այլ գիտությունների հետ:

Թեմա 2. Մանկիկային և վաղ մանկական տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները:

Վաղ տարիքի երեխաների զարգացման սոցիալական իրադրությունը: Առարկայական-գործիքային գործունեության զարգացումը վաղ մանկության տարիքում: Երեխայի ճանաչողական ոլորտի կայացումը, անձնային ոլորտի ձևավորումը, խոսքի զարգացումը վաղ մանկության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամը:

Թեմա 3. Հոգեկան զարգացումը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում

Նախադպրոցականի զարգացման սոցիալական

իրադրությունը: Նախադպրոցականի առաջատար գործունեությունը: Խաղի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա: Նախադպրոցականի իմացական ոլորտի զարգացման առանձնահատկությունները, խոսքի զարգացումը, հուզական ոլորտի և կամքի զարգացումը որպես վարքի կառավարման ընդունակություն: Նախադպրոցականի անձի ձևավորումը և հարաբերությունների և հաղորդակցման առանձնահատկությունները: Նախադպրոցական տարիքի հիմնական հոգեբանական նորագոյացությունները: Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը: Կրտսեր դպրոցականի զարգացման սոցիալական իրադրությունը, հաղորդակցման և հարաբերությունների առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցականի սոցիալական կարգավիճակը և Ես-կոնցեպցիան: Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը, իմացական ոլորտի զարգացումն ու առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական հոգեբանական նորագոյացությունները:

Թեմա 4. Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության տարիքում: Դեռահասների զարգացման ժամանակակից սոցիալական իրադրությունը: Դեռահասության տարիքի ճգնաժամը: Փոփոխություններ դեռահասի ֆիզիկական զարգացման մեջ: Դեռահասների սեռական նույնականացումը /իդենտիֆիկացիան/: Դեռահասի Հարաբերությունները մեծահասակների և հասակակիցների հետ: Փոփոխությունները դեռահասների կոգնիտիվ ոլորտում: Դեռահասների առաջատար գործունեությունը: Դեռահասի մոտիվացիոն-պահանջունքային ոլորտի առանձնահատկությունները: Մեծության զգացումը դեռահասության տարիքում: Դեռահասի անձի առանձնահատկությունները: Բնավորության շեշտվածություն:

Թեմա 5. Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկության տարիքում: Պատանեկությունը որպես զարգացման և ինտեգրացիայի փուլ:

	<p>Կոզնիտիվ փոփոխությունները պատանեկության տարիքում:</p> <p>Մասնագիտության ընտրություն: Ավագ դպրոցականի առաջատար գործունեությունը: Փոխհարաբերությունները շրջապատողների հետ պատանեկության տարիքում:</p> <p>Թեմա 6. Ուսուցչի հոգեբանություն:</p> <p>Ուսուցիչը ուսումնական գործընթացի կազմակերպիչ: Ուսուցիչի դերը աշակերտների փոխհարաբերությունների ձևավորման գործում: Ուսուցչի մասնագիտական գործունեության կարևոր գործոնները /իմացական, կառուցողական, կազմակերպչական, կոմունիկատիվ: Պատկերացում տալ մանկավարժական ընդունակությունների, մանկավարժական տակտի, հեղինակության, դիրքորոշումների և այլ կարևոր կողմերի մասին, որոնք ապահովում են ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը:</p> <p>Թեմա 7. 8. Ուսուցման և դաստիարակույթյան հոգեբանություն:</p> <p>Ուսուցումը որպես երկկողմանի պրոցես: Ուսուցումը գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերման պրոցես: Գիտելիքների արդյունավետ յուրացումը հիմնականում կախված է երեք գործոններից՝ ա. ինչ են սովորեցնում, բ. ինչպես են սովորեցնում, գ. ում են սովորեցնում: Ի վերջո, շատ կողմեր կան, որոնց պետք է անդրադառնալ և պետք է ուսուցանել դաստիարակելով և ընդհակառակը:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p>Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,</li> <li>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների</li> </ul>

	<p>կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:</li> </ul>
<p><b>Գրականություն</b></p>	<p>Պարտադիր-</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բալյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, 1983, 456 էջ</li> <li>2.Սովետահայ հոգեբանություն, Ընտեր էջեր,, կազմ. Թութունջյան Հ., Երևանի համալս., հրատ., 1988, 528 էջ</li> <li>3. Տարիքային և մանկավարժ. հոգեբանություն, իմբ. Ա. Պետրովսկի, Ե., 1977, 398 էջ</li> <li>4. Ղազարոյան Ա., Ս. Սեդրակյան, Հոգեբանական թեստերի և զարգացնող վարժությունների ժողովածո և, Ջանգակ հրատ., Ե., 2015, 188էջ</li> <li>5. Ղազարոյան Ա., Ս. Սեդրակյան, Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում, մեթ. Ձեռնարկ, Ե., 2016, 184 էջ</li> <li>6. Ղազարոյան Ա., Հոգեբանական աջակցություն ուսուցիչներին, ուս. Ձեռնարկ,, Վանաձոր, 2019, 208 էջ</li> <li>7.Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М Возрастная и педагогическая психология М 2004</li> <li>8. Детская психология, под ред. Я. Коломинского, Е. Панько, Минск, 1988, 399 с.</li> <li>9. Крайг Г. Психология развития1 7- е изд., Питер 2003, 992 с.</li> <li>10. Мир детства, Младший школьник, сост. А. Захарова, В. Словодчиков, 2-е изд., М.,1988, 272</li> <li>11. Мухина В.С. Возрастная психология М. 1999</li> <li>12. Обухова Л.Ф. Возрастная психология М. 2004</li> <li>13. Психология, Словарь, под ред. А. Петтовского, М. Ярошевского, изд. 2-е, М., 1990, 494 с.</li> <li>14. Проблемы общей, возрастной и педагогической психологии, под ред. В. Давыдова, М., 1978, 238 с.</li> </ol>

	<p>15. Фридман Л., Волков К., Психологическая наука – учителю, М., 1985, 224 с</p> <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Мухина В.С. Возрастная психология М. 1999</li> <li>2. Немов Р.С. Психология книга 2 м.2004</li> <li>3. Нью Комб Развитие ребенка</li> <li>4. Обухова Л.Ф. Возрастная психология М. 2004</li> <li>5. Психология, Словарь, под ред. А. Петтовского, М. Ярошевского, изд. 2-е, М., 1990, 494 с.</li> <li>6. Проблемы общей, возрастной и педагогической психологии, под ред. В. Давыдова, М., 1978, 238 с.</li> <li>7. Фридман Л., Волков К., Психологическая наука – учителю, М., 1985, 224 с</li> </ol>
--	---

<b>Դասընթացի թվանիշը, անվանումը</b>	<b>ՄԻ/Բ-221_ Կիրառական տեղեկատվական համակարգերը ըստ ոլորտի</b>			
<b>Դասընթացին հատկացվող կրեդիտը</b>	2 կրեդիտ			
<b>Ուսումնառության տարի / կիսամյակ</b>	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
<b>Ժամերի բաշխումը</b>	Լսարանային	28	Դասախոսություն	-
			Մեմինար	-
			Լաբորատոր աշխատանք	-
			Գործնական աշխատանք	28
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
<b>Ստուգման ձևը</b>	Քննություն, ընթացիկ քննություն, <u>ստուգարք</u>			
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին ծանոթացնել մասնագիտական ոլորտում կիրառական տեղեկատվական համակարգերի տեղին և դերին: Ձինել ժամանակակից կիրառական տեղեկատվական ծրագրային համակարգերի մասին գիտելիքներով: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր պրակտիկ գիտելիքները համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների վերաբերյալ: Դասընթացի արդյունքում ուսանողները պետք է հստակ կարողանան օգտվել համակարգչից և կիրառական տեղեկատվական համակարգերից: Տիրապետել համապատասխան ծրագրային փաթեթների հետ աշխատանքի սկզբունքներին, դրանք կիրառել մասնագիտական			

	<p>ուլորտում:</p>
<p><b>Դասընթացի վերջնարդյունքները</b></p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <p>Իմանա մասնագիտական ոլորտում կիառական տեղեկատվական համակարգերի ծրագրային փաթեթների կիրառման անհրաժեշտ գործիքները, մասնագիտական ոլորտի խնդիրների լուծման համար դրանց գործնական կիրառությունը, իմանա առցանց տեղեկատվական հարթակներից օգտվելու, կիրառական ծրագրերից օգտվելու հիմնական սկզբունքները և այդ շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:</p> <p><i>Հմտություն</i></p> <p>կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում մասնագիտական ոլորտում,</p> <p>կարողանա ըստ թեմատիկ առաջադրանքների չափանիշների իրականացնել կամ լուծել մասնագիտական ոլորտի խնդիրը</p> <p>կարողանա մասնագիտական առաջադրանքների կատարման ընթացում օգտվել անցանց և առցանց համապատասխան ծրագրային միջոցներից</p> <p><i>Կարողունակություն</i></p> <p>տիրապետի համակարգչային սարքավորումներին, տեքստային, հաշվարկային և այլ ծրագրերին, մասնագիտական ոլորտի վերաբերյալ տեղեկատվական համակարգերի կիրառմամբ խնդիրների լուծմանը, հետազոտության, մասնագիտական ոլորտի տվյալների մշակման ծրագրային մեթոդներին</p>
<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p>Թեմա 1 Ժամանակակից կիրառական տեղեկատվական համակարգերի դերը մասնագիտության ոլորտում, նրանց կիրառությունը մասնագիտական խնդիրների գործընթացում, ինֆորմացիոն-որոնողական համակարգեր</p> <p>Թեմա 2 MS Word տեքստային խմբագիր ծրագիր: Տեքստային ծրագրի աշխատանքների հիմնական սկզբունքները և դրանց կիրառությունը մասնագիտական գործընթացում</p> <p>Թեմա 3 MS Power Point շնորհանդեսային ծրագիրը և դրա դերը մասնագիտության մեջ</p> <p>Թեմա 4 MS Excel աղյուսային խմբագիր: Բանաձևերի, դիագրամմաների ստացումը և ֆունկցիաների կիրառությունը մասնագիտական տվյալների մշակման գործում</p> <p>Թեմա 5 Internet, mail, տեղեկատվական առցանց համակարգերի կիրառությունը մասնագիտության մեջ:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p>Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,</li> <li>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> </ul>



	<ul style="list-style-type: none"> <li>ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:</li> </ul>
<b>Գրականություն</b>	<p>Պարտադիր-          Ս Կոստյան MS EXCEL ԱՂՅՈՒՍԱԿԱՅԻՆ ԽՄԲԱԳԻՐ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱԸՎ), 2017          Симонович С. Информатика. Базовый курс. Учебник для вузов. Стандарт третьего поколения Изд. 3, 2020</p> <p>Լրացուցիչ-          Կ. Սիրադեղյան «Ուսուցման և գիտելիքների ստուգման գործընթացների ինտեգրումը ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրմամբ», Կրթություն, բարեփոխումներ, հիմնախնդիրներ, հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր. Իրավունք, 2008          Հովսեփյան Վ. Ս. - "Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի հիմունքներ", Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005          Карчевский Е.М., Филиппов И.Е. -Excel 2007 в примерах, 2010          Харитонов И.А. Microsoft Office Access 2007, СПб.: БХВ – Петербург, 2008</p> <p>Էլեկտրոնային-  <a href="https://office-guru.ru/excel/samouchitel-excel-dlja-chainikov-1.html">https://office-guru.ru/excel/samouchitel-excel-dlja-chainikov-1.html</a>  <a href="https://www.youtube.com/watch?v=tj2USpibb7Y">https://www.youtube.com/watch?v=tj2USpibb7Y</a>  <a href="#">Lesson-word.pdf</a></p>

<b>Դասընթացի թվանիշը, անվանումը</b>	<b>ՔԿ/բ-141 Տարիքային ֆիզիոլոգիա</b>			
<b>Դասընթացին հատկացվող կրեդիտը</b>	2 կրեդիտ			
<b>Ուսումնառության տարի / կիսամյակ</b>	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
<b>Ժամերի բաշխումը</b>	Լսարանային	28	Դասախոսություն	14
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	14
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
<b>Ստուգման ձևը</b>	ստուգարք			
<b>Դասընթացի նպատակը</b>	Դասընթացի նպատակն է խորացնել և ամրապնդել ուսանողների գիտելիքները օնտոգենեզի հիմնական փուլերի, տարիքային պարբերացման, օրգանիզմի գործունեության տարիքային առանձնահատկությունների, երեխաների ու դեռահասների օրգանիզմի կենսագործունեության վրա միջավայրի տարբեր գործոնների ազդեցության մասին:			
<b>Դասընթացի</b>	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ			

<p><b>Վերջնարդյունքները</b></p>	<p>Վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><b>Գիտելիք</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տարիքային պարբերացման մասին</li> <li>• Աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները</li> <li>• Ֆիզիկական զարգացման, արսելերացիայի, դեցելերացիայի մասին</li> <li>• Յուրաքանչյուր տարիքային փուլի բնութագիրը</li> <li>• Օրգան-համակարգերի տարիքային առանձնահատկությունները</li> </ul> <p><b>Հմտություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• փորձարարական աշխատանքների կատարման մեթոդներին</li> <li>• վերլուծություն կատարելու մեթոդական հմտություններին:</li> </ul> <p><b>Կարողունակություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում</li> <li>• տիրապետել ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրման մեթոդներին,</li> <li>• կարողանալ կատարել ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրման փորձեր,</li> <li>• որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ</li> <li>• հանձնարարաված գրականության հիման վրա կազմել ռեֆերատներ,</li> <li>• տարբեր թեմաների մշակում</li> </ul>
<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p><u>Թեմա1</u> Ներածություն:Տարիքային ֆիզիոլոգիան որպես գիտություն: Տարիքային ֆիզիոլոգիայի ուսումնասիրության մեթոդները: Երեխաների և դեռահասների աճի ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները</p> <p><u>Թեմա2.</u>Նյարդային համակարգի ֆիզիոլոգիա</p> <p>Նյարդային համակարգի նշանակությունը, կառուցվածքը: Նեյրոն, զարգացման տարիքային առանձնահատկությունները:ԿՆՀ-ի ֆիզիոլոգիա</p> <p><u>Թեմա 3</u> Բարձրագույն նյարդային գործունեություն</p> <p>Ի.Պ. Պավլովի ուսմունքը բարձրագույն նյարդային գործունեության տիպերի մասին:</p> <p><u>Թեմա 4</u>Վերլուծիչների ֆիզիոլոգիա</p> <p>Վերլուծիչների գործունեության տարիքային առանձնահատկությունները:</p> <p><u>Թեմա 5.</u> Ներզատական գեղձերի ֆիզիոլոգիական ֆունկցիաների հորմոնային կարգավորումը, հորմոնների հատկությունները: Ներզատական համակարգի տարիքային առանձնահատկությունները:</p>

	<p><u>Թեմա 6.</u> Հենա-շարժողական համակարգի տարիքային առանձնահատկությունները: Կմախքի Բաժինները, զարգացումը: Մկանային համակարգ: Հենա-շարժողական համակարգի խախտումները:</p> <p><u>Թեմա 7.</u> Արյունատար համակարգ, արյան կազմը և ֆունկցիաները: Արյան խնբեր, ռեզուս-գործոն: Իմունիտետ: Արյան համակարգի տարիքային առանձնահատկությունները:</p> <p><u>Թեմա 8.</u> Սիրտ-անոթային համակարգի տարիքային առանձնահատկությունները:</p> <p><u>Թեմա 9.</u> Շնչառական համակարգի տարիքային առանձնահատկությունները</p> <p><u>Թեմա 10.</u> Մարսողության համակարգի կառուցվածքագործառույթային բնութագիրը, տարիքային առանձնահատկությունները:</p> <p><u>Թեմա 11.</u> Նյութափոխանակության տարիքային առանձնահատկությունները</p> <p><u>Թեմա 12.</u> Արտազատական համակարգի տարիքային առանձնահատկությունները</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p>Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,</li> <li>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,</li> <li>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:</li> </ul>
<p><b>Գրականություն</b></p>	<p><b>Պարտադիր-</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ս.Շ. Կարապետյան, Ս. Ս. Շախրեյան, Տարիքային ֆիզիոլոգիա - Երևան «լույսե հրատարակչություն 1981 թ.</li> <li>2. М. М. Безруких, В.Д. Сонькин, Д.А. Фарбер, Возрастная физиология.: Учеб. пособие для студ. высш. пед. учеб.заведений- Москва издательский центр «Академия է</li> </ol>

2003.-416 с.

3. М.Р.Сапина, З. Г. Брыксина, *Анатомия и физиология детей и подростков: Учеб. пособие для студ. пед. вузов - Москва издательский центр «Академия»*, 2004.-456 с.

4. А.А. Маркосян, *Вопросы возрастной физиологии: Москва «Просвещение» 1974 .- 223с.*

5. А.Г. Хрипкова, М.В.Антропова, Д.А.Фарбер, *Возрастная физиология и школьная гигиена: М. «Просвещение».1989*

**Լրացուցիչ-**

1. Դ. Ն. Խուդավերդյան, Վ. Բ. Ֆանարջյան, Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ, դասագիրք ուսումնական հաստատությունների համար, Երևան, Ռուբին, 1998,-720 էջ:

2. Ս.Ս.Մինասյան, Ծ.Ի.Աղամյան, Ն.Վ.Սարգսյան, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա: Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: -Եր.: Երևանի համալսարան, 2006

3. А.С.Солодков, Е.Б.Сологуб, *Физиология человека: Учебник. Изд.2-е.-М.Олимпия Пресс. 2005*

4. Популярная медицинская энциклопедия под ред. В. И. Покровского, 1991

5. Н.Н.Леонтьева, К.В.Маринова, *Анатомия и физиология детского организма: Учеб. пособие для студ. пед.вузов-М. «Просвещение».Первая часть. 1975*

6. Н.Н.Леонтьева, К.В.Маринова, *Анатомия и физиология детского организма: Учеб. пособие для студ. пед.вузов-М. «Просвещение».2 часть. 1976*

<b>Դասընթացի թվանիշը, անվանումը</b>	<b>ՄՀ/բ –206 Հայ դպրոցի և մանկավարժության պատմություն</b>			
<b>Դասընթացին հատկացվող կրեդիտը</b>	3 կրեդիտ			
<b>Ուսումնառության տարի / կիսամյակ</b>	2-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
<b>Ժամերի բաշխումը</b>	Լսարանային	42	Դասախոսություն	22
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	20
	Ինքնուրույն	48		
	Ընդամենը	90		
<b>Ստուգման ձևը</b>	Քննություն, ընթացիկ քննություն, <b><u>ստուգարք</u></b>			
<b>Դասընթացի նպատակը</b>	* Ուսանողներին զինել մանկավարժական մտքի, դպրոցի, դաստիարակության բազմաբնույթ գիտելիքներով			

	<ul style="list-style-type: none"> <li>• Խորացնել մանկավարժական գիտելիքները, որպեսզի ուսանողը կարողանա վեր լուծել, համեմատել և համապատասխան եզրահանգումներ կատարել անցյալի մանկավարժական վերաբերյալ</li> <li>• Ուսանողը ճիշտ իմաստավորի անցյալի մանկավարժական փորձը և այն ստեղծագործաբար կիրառի</li> </ul>
<p><b>Դասընթացի վերջնարդյունքները</b></p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Դաստիարակության պատմական բնույթը</li> <li>• Մանկավարժական գործունեության հիմնական բնութագրերը</li> </ul> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Բացահայտել դաստիարակության, կրթության և ուսուցման տեսականի ու գործնականի, դպրոցի զարգացման ընթացքը՝ մանկավարժական մտքի ականավոր գործիչների գործունեությամբ</li> <li>• Բացատրել և հիմնավորել դաստիարակության պատմական բնույթը</li> <li>• Ընդգծել դաստիարակության տեսության գործնականի սերտ կապը ու զարգացումը</li> <li>• Ցույց տալ մանկավարժական մտքի զարգացման որակական փոփոխությունները, լուսավորության բնագավառի գործիչների հայացքները լուսաբանելիս և զատել այն դրականը, որը կնպաստի մանկավարժության տեսության առաջընթացի</li> </ul> <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսուցչի մասնագիտության ժամանակակից խնդիրներին</li> <li>• Ուսումնադաստիարակչական աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու կարողություններին և հմտություններին</li> <li>• Ժամանակակից մանկավարժական տեսություններին</li> <li>• Ճիշտ իմաստավորել անցյալի մանկավարժական փորձը և այն կիրառել ստեղծագործաբար</li> </ul> <p>Բուհում ուսանողի ինքնուրույն աշխատանքների ձևերին, իրավունքներին և պարտականություններին</p>

<p><b>Դասընթացի բովանդակությունը</b></p>	<p><u>Դպրոցն ու դաստիարակությունը միջնադարում</u>  <u>Եկեղեցական դպրոցներ, ասպետական</u>  <u>դաստիարակություն</u>  <u>Վերածնունդ</u></p> <p>1. Ներկայացնել մշակույթը և գիտությունը միջնադարում, եկեղեցական համքարային, գիլդիական դպրոցները:</p> <p>2. Գաղափար տալ ասպետական դաստիարակության մասին:</p> <p>3. Դպրոցը և մանկավարժական միտքը վերածննդի դարաշրջանում (Վիտորինո դա Ֆելտրե, Ֆ.Ռաբլե, Թոմաս Մոր):</p> <p><u>Յ. Ա. Կոմենսկի, Ջ.Լոկկ:</u></p> <p>1. Յան Ամոս Կոմենսկի – Նոր ժամանակի մանկավարժության հիմնադիր: Կյանքը և մանկավարժական գործունեությունը: Փիլիսոփայական հայացքները: Հումանիզմը որպես Կոմենսկու մանկավարժության տեսության հիմք:  Մարդկային հասարակության վերակառուցման պլանը: Բնահարմար դաստիարակության հասկացությունը: Տարիքային պարբերացման հիմնավորումը: Դպրոցական սիստեմը: Դիդակտիկական սկզբունքները, կանոնները, ուսուցման մեթոդները: Դաս-դասարանային համակարգ: Ուսուցումը մայրական և մայրենի լեզվի դպրոցում: Կոմենսկին ուսուցչի դերի և նրան ներկայացվող պահանջների մասին: Կոմենսկու դասագրքերը. «Ջգայական աշխարհ նկարներով», «Մայրական դպրոց», «Մեծ դիդակտիկա»:</p> <p>2. Ջոն Լոկկի մանկավարժական հայացքները: Մոցիալ փիլիսոփայական հայացքները. «Մաքուր տախտակի տեսությունը», «Ջենտլմենի դաստիարակությունը», դաստիարակության խնդիրները, միջոցները, կրթության բովանդակությունը: Ջոն Լոկկի կողմից դասային ֆեոդալական դաստիարակության համակարգի քննադատությունը: Ջոն Լոկկի ազդեցությունը Հելվեցիուսի վրա:</p> <p><u>Ժ.Շ. Ռուսոյի, Պեստալոցցու մանկավարժական ուսմունքը</u></p> <p>1. Ժ.Շ.Ռուսոյի մանկավարժական տեսությունը: Հասարակական, քաղաքական և փիլիսոփայական հայացքները: Պայքարը ֆեոդալական հասարակության,</p>
--	--

դոգմատիկ դաստիարակության դեմ: Երեխայի անձի նկատմամբ հարգանքը, նրա իրավունքների պաշտպանությունը, համամարդկային դաստիարակության անհրաժեշտությունը:

Դաստիարակության երեք աղբյուրը: Երեխայի ազատ և բնական դաստիարակության պահանջը: Երեխայի զարգացման տարիքային պարբերացումը և յուրաքանչյուր շրջանի համար բնորոշ առանձնահատկությունները՝ նպատակը, ինդիքները, բովանդակությունը, մեթոդները: «Էմիլ կամ դաստիարակության մասին» մանկավարժական վեպը: Կնոջ դաստիարակությունը: Ռուսոյի մանկավարժական հայացքների թերությունները:

2. Պեստալոցցու մանկավարժական գործունեությունն ու տեսությունը: Հումանիստ մանկավարժի կյանքը և մանկավարժական գործունեությունը:

Դաստիարակության բովանդակությունն ու նշանակությունը: Երեխաների ընդունակությունների զարգացումը ուսուցման գործընթացում, զննականության սկզբունքի հոգեբանական հիմնավորումը: Տարրական կրթության տեսության և պրակտիկայի զարգացումը: Բոլոր գիտությունների պարզագույն էլեմենտները: Տարրական դպրոցում ուսումնական առարկաների, մասնավոր մեթոդիկաների հիմունքների ստեղծումը: «Լինհարտ և Հերտրուդա», «Հերտրուդան ինչպես էր սովորեցնում իր երեխաներին», «Կարապի երկը», «Ուսմունք թվի մասին» աշխատությունները:

Ա.Դիստերվեգ, Հերբարտ

1. Դիստերվեգի դիդակտիկական հայացքները հիմնված բնահարմարության սկզբունքի վրա: Դիստերվեգը զարգացնող ուսուցման և ուսուցչի մասին:

2. Ի. Հերբարտը ուսուցման պրոցեսի կառուցվածքի և նրա աստիճանների մասին : Հերբարտը բարոյական դաստիարակության բովանդակության մասին:

3. Հերբարտի մանկավարժության ազդեցությունը դաստիարակության և ուսուցման պրակտիկայի վրա: Ռուսական դպրոցը 18-րդ դարում: Մ.Լոմոնոսով Լոմոնոսովի դերը ռուս մանկավարժական մտքի զարգացման գործում: Լոմոնոսովի դերը գիտության և մանկավարժական մտքի զարգացման գործում;

Ռուսական դպրոցը 19-րդ դարում:Ն. Պիրոգով, Լ.Տոլստոյ

1. Մանկավարժական գործիչները, լուսավորիչների գաղափարները (19-րդ դ. )

Վ.Գ.Բելինսկին դաստիարակության մասին:

2 Ն.Ն.Պիրագովի մանկավարժական գաղափարները

«Կյանքի հարցեր» հոդվածը: Համամարդկային

դաստիարակության գաղափարները:

3. Լ.Ն.Տոլստոյի մանկավարժական գաղափարները և գործունեությունը: Յասնայա Պոլյանայի դպրոցը.ազատ դաստիարակության սկզբունքների կիրառումը:

«Այբենարան»-ի կազման սկզբունքները,

բովանդակությունը: Նրա մանկավարժական համակարգի առանձնահատկությունները:

Կ.Դ.Ուշինսկի

1. Կ.Դ.Ուշինսկին գիտական-մանկավարժության հիմնադի,: ժողովրդայնության գաղափարը որպես դաստիարակության և կրթության հիմք:

2. Մանկավարժությունը որպես գիություն և արվեստ: «Մանկավարժական մարդաբանություն»:

3. Բարոյական դաստիարակության հիմունքների մշակումը: Ուշինսկու գաղափարները նախնական կրթության վերաբերյալ և դրանց պրակտիկ կիրառումը դասագրքերում և ձեռնարկներում:

4. Տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման համակարգը: Ուշինսկու ազդեցությունը գիտական մանկավարժության և տարրական դպրոցի զարգացման վրա:

Ա.Մակարենկո

Աշխատանքային դաստիարակության տեսության մշակումը: Մակարենկոն կոլեկտիվի մասին` “Դրոշներ աշտարակի վրա”:

1. Աշխատանքային դաստիարակության տեսության մշակումը:

2. Մակարենկոն կոլեկտիվի մասին` “Դրոշներ աշտարակի վրա”:

3. Մակարենկոն ընտանեկան դաստիարակության մասին: «Մանկավարժական պոեմ»:

Մինչմեարոյայան հայագիր դպրոցները, Մ.Մաշտոց

1. Դպրոցն ու դաստիարակությունը մինչև Մեսոպոսիան



հայագիր դպրոցը:

2. Տեղեկություն հայկական լեռնաշխարհի և հայ ժողովրդի սկզբնավորման և կազմավորման պատմության վերաբերյալ:

3. Դաստիարակությունը ն/դ հասարակարգում և ստրկատիրության նախնական շրջանակում:

Դաստիարակությունը կապված մարդու կյանքի, մեծերի և փոքրերի համատեղ աշխատանքի հետ /հաշվառելով տարիքային և սեռային առանձնահատկությունները/:

Ընդօրինակման դերը դաստիարակության մեջ: Ավագ սերնդի կանխամտածված ներգործությունը որպես ուսուցման նախնական ձև:

Գեղամա լեռների իմաստային ժայռապատկերները/աստղադիտարան, աստղային երկինք, երկրագնդի գնդաձևության պատկերում/:

Մեծամորի մետաղաձուլարանը, աստղադիտարանը որպես անվերապահ լինելիության գրավական:

Դաստիարակության բովանդակությունը դպրոցից դուրս հիմնականում եղել է աշխատանքային և ռազմաֆիզիկական:

Դաստիարակությունն ու դպրոցը Ուրարտուի /Արարատյան/ պետության և հայկական առաջին թագավորության ժամանակաշրջանում/ մինչև 4-

րդ դարավերջ/:

Մշակույթը, տնտեսությունը, սեպագիրը, դպրոցները / Մեյհանական/ նախասահմանված աշխարհիկ և հոգևոր ավագանու համար:

Դաստիարակության և կրթության բովանդակությունը՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, վերնախավի համար նաև ռազմաֆիզիկական:

Հայկական դպրոցների հետագա զարգացումը, Երվանդունիների թագավորության և հելլենիզմի ժամանակաշրջանում. / Ողյունյա քուրմ, Տիրան, Արտավազդ/:

Դպրոցի տիպերը; Մեհյանական նշանագրերը:

Դաստիարակության և կրթության բովանդակությունը հելենիստական դպրոցներում-մտավոր, բարոյական, գեղագիտական, որոշ չափով ֆիզիկական:

Մեհյանական դպրոցներում – մտավոր, բարոյական, գեղագիտական, կրոնական: Ուսուցումը նախատեսված է եղել միայն տղաների համար: Քրիստոնեության մուտքը. մեհյանական դպրոցների փակումը / 3-րդ դարավերջ, 4-րդ դարասկիզբ/:

Քրիստոնեական վարդապետությունը քարոզող

դպրոցների բացումը: 354թ. Աշտիշատի կանոնադիր ժողովը:

Դպրոցն ու դաստիարակությունը 5-10-րդ դարերում

Ա. Շիրակացու դպրոցը: Ս. և Ս. Սյունեցիներ: Գ. Մագիստրոս

1. Անանիա Շիրակացի – 7-րդ դ. ճշգրիտ գիտությունների զարգացումը: Նրա գիտական և մակավարժական գործերը:

2. Ստեփանոս և Սահակադուխտ Սյունեցիներ /8-րդ դար/: Նրանց գիտական և մանկավարժական գործունեությունը, մասնագիտական երաժշտական դպրոցի բացումը:

3. Դպրոցի և մանկավարժական մտքի զարգացումը հայկական վերածննդի ժամանակաշրջանում:

Գր. Մագիստրոս 990-1058թթ./, Հովհ. Իմաստասեր Սարկավազ / 1045-1129թթ./, նրանց մանկավարժական հայացքները: Դպրոցական ցանցի ընդարձակումը, ուսուցման բովանդակությունը, մեթոդները, սկզբունքները, դասի կազմակերպման ձևերը: Նոր դասագրքերը /քերականություն, թվաբանություն/:

Հ. Իմաստասեր: Անիի և Հաղպատի դպրոցները

1. Հովհ. Իմաստասեր Սարկավազ (1045-1129թթ.) նրանց մանկավարժական հայացքները: Դպրոցական ցանցի ընդարձակումը, ուսուցման բովանդակությունը, մեթոդները, սկզբունքները, դասի կազմակերպման ձևերը: Նոր դասագրքերը /քերականություն, թվաբանություն/:

2. Անիի դպրոցները:

3. Հաղպատի դպրոցները:

Ն. Շնորհալի, Մ. Գոշ

1. Ներսես Շնորհալի, Պահլավունի (1101-1173թ.): Դպրոցի քննադատությունը, նոր ոճով աշխատանքների կազմակերպումը: Շնորհալու Առակ-հանելուկները, դրանց կրթադաստիարակչական նշանակությունը:

2. Մխիթար Գոշ (1130-1213թթ.): Գետիկի և Նոր Գետիկի դպրոցներ: «Դաստաստանագիրք Հայոց»-ում լուսավորության հարցերը: Գոշի առակների դաստիարակչական նշանակությունը

Գլխավորի, Տաթևի համալսարան: Ե.Նչեցի Գ. Տաթևացի

1. Եսայի Նչեցի (1250/54-1338թթ.): Գլխավորի համալսարան: Ուսուցչի, սովորողների աշխատասիրության, ինքնուրույնության, անհատի ձևավորման գործում բարոյական գործունեության մասին: Նչեցու դիդակտիկական հայացքները:

2. Գրիգոր Տաթևացի (1346-1409թթ.).

Մանկավարժական հայացքները: «Մահմանադրություն դաստիարակության» գիրքը: Անձի ձևավորման գործում դաստիարակության միջավայրի և ժառանգության դերի գնահատումը՝ «Լվացած մագաղաթ կամ մաքուր պնակիտ»: Տարիքային պարբերացումն ըստ Տաթևացու: Ուսուցչի դերի գնահատումը: Նրա ետադիմական հայացքները կանանց կրթության և մարմնական պատիժների հարցում

Մասնագիտական դպրոցներ, Արհեստագործական ուսումնարաններ

1. Ժամանակաշրջանը և դպրոցի մանկավարժության վիճակը: Ցարիզմի և թուրքական բռնապետության ազդեցության քաղաքականությունը: Բարեգործական ընկերությունները: Հայ ուսուցիչների 1882թ. առաջին համագումարը: Ուսուցչական կադրերի պատրաստման հարցերը և ուսումնական հաստատությունները: Հայ պարբերական մամուլը: «Դաստիարակ», «Դպրոց», «Մանկավարժական թերթ», «Մանկավարժանոց», «Պսակ», «Աղբյուր» և այլ հանդեսներ: Գիշերօթիկ դպրոց, դպրոց-որբանոցներ: Արհեստագործական ուսումնարաններ, ուսուցման բովանդակությունը: Ռ. Պատկանյանի «Արական արհեստագործական ուսումնարանը, Ռ. Պատկանյան (1830-1892թթ.)- մանկապարտեզի, արհեստագործական ուսումնարանների և աղջիկների դաստիարակության, դպրոցական գործի կազմակերպում:

2. Մ. Խրիմյանի և Ս. Վիչենյանի արհեստագործական ուսումնարանները», Սանասարյան վարժարան:

3. Ծաղկոց-մանկապարտեզ. I մանկապարտեզ նոր տիպի (ֆրյոբելյան) 1882թ. Թիֆլիս, հետագայում՝ Եևան-Ալեքսանդրապոլ, Զմյուռնիա, Կ. Պոլիս: Դպրոցի և լուսավորության ասպարեզի ականավոր գործիչներ: Դպրոցը հայկական գաղթավայրերում

1. Դպրոցի վիճակը հայկական գաղթավայրերում: 1512 թ. Վենետիկում հայերեն առաջին գրքի տպագրությունը: Մխիթարյանների լուսավորչական գործունեությունը, դպրոցների հիմնումը: (Մխիթարյան միաբանություն):

2. Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի մոտեցումը լուսավորության գործին որպես ազգային ազատագրական պայքարի միջոց «Նոր տետրակ», «Որոգայթ փառաց» աշխատությունները:

19-րդ դարի ճեմարանները

1. Մոսկվայի Լազարյան ճեմարան (1815թ.): Էջմիածնի Գևորգյան (1874թ.) և Սկյուտարի (1838թ.) ճեմարանները: Ներկայացնել նրանց հիմնադիրներին և նրանց դերը հայ դպրոցի լուսավորության գործում:

Ներսիսյան դպրոց - Հ. Ալամդարյան

Ալամդարյանը որպես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի առաջին տեսուչ: Լազարյան ճեմարանում նրա կատարած բեղմնավոր աշխատանքը և բարեփոխումները կրթության գործում

Խ.Աբովյան

1. Աբովյանը որպես աշխարհաբարի հիմնադիր:

2. «Նախաշավիղ», «Պատմություն Տիգրանի» աշխատությունները:

3. Աբովյանի մանկավարժական հայացքները: Աբովյանը ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության մասին:

Ղ. Աղայան

1. Աղայանի մանկավարժական գործունեությունը:

2. Աղայանի դասագրքերը:

